# Կանաչ քաղաքների շրջանակ 2(GrCF2 W2) – «ՀԷՑ» Ներդրումային Ծրագիր

| | |
|---|---|
| Երկիր | ՀԱՅԱՍՏԱՆ |
| Ծրագրի համարը | 52868 |
| Բիզնես ոլորտ՝ | Էներգետիկա- Եվրասիա – Էներգետիկայի միջազգային գործակալություն (MEA) |
| Պետական/մասնավոր՝ | ՄԱՍՆԱՎՈՐ |
| Բնապահպանական կատեգորիա՝ | |
| Հաստատման պլանավորված ամսաթիվը՝ | 2021թ.-ի հուլիսի 14-ը |
| Կարգավիճակ՝ | Ուսումնասիրության փուլում է, սպասվում է վերջնական քննություն |
| Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվը՝ | 2021թ.-ի հունիսի 21-ը |

## Ծրագրի նկարագրություն

Ծրագիրն իրենից ներկայացնում է 2017 թվականին կնքված՝ 80 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով ծրագրի (OpID 48957) երկարացում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցերի» («ՀԷՑ» կամ «Վարկառու» կամ «Ընկերություն»)10-ամյա (2016-27) ներդրումային ծրագրի 1-ին փուլի իրականացման համար, որն ուղղված է Հայաստանում էլեկտրաէներգիայի բաշխման ենթակառուցվածքի արդիականացմանը: Այն Վարկառուին հնարավորություն կընձեռի իրականացնել ներդրումային ծրագրի 2-րդ փուլի («Ծրագիր») 2021-22թթ. -ի կապիտալ ներդրումները, որոնք, ի թիվս այլ ոլորտների, ուղղված կլինեն նաև Հայաստանի երկու խոշոր քաղաքներին ՝ Երևանին և Գյումրիին («Քաղաքներ»):

## Ծրագրի նպատակները

Ծրագիրը կօգնի Վարկառուին բարելավել էներգաարդյունավետությունը, նվազեցնել տեխնիկական և առևտրային կորուստները և, հետևաբար՝ ջերմոցային գազերի արտանետումները, ինչպես նաև բարելավել երկրում էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհանուր հուսալիությունը: Ծրագիրը կաջակցի «ՀԷՑ»-ին՝ իր հաճախորդներին մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիա մատակարարելու շարունակական ջանքերում:

Ծրագիրը Հայաստանում Բանկի ներգրավվածության երկարացումն է՝ ՎԶԵԲ-ի «Կանաչ քաղաքներ» ծրագրի միջոցով: «ՀԷՑ»-ի ներդրումային ծրագիրն ուղղված է «Կանաչ քաղաքների գործողությունների պլաններում» (GCAP) սահմանված առաջնահերթություններին և մշակվել է երկու քաղաքների քաղաքապետարանների հետ սերտորեն խորհրդակցելով և հաշվի առնելով «Կանաչ քաղաքների գործողությունների պլանները», որոնք ընկած են երկու քաղաքների նկատառումների հիմքում:

## Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Ծրագիրը «Կանաչ քաղաքների շրջանակ 2» (GrCF2)-ի մաս է կազմում և հանդիսանում է Երևանի և Գյումրիի «Կանաչ քաղաքների գործողությունների պլաններում» հետագա ներդրում: «Կանաչ քաղաքների շրջանակ 2»-ն իրենից ներկայացնում է ռազմավարական և բազմածրագրային մոտեցում, որը նպատակ ունի օգնելու բացահայտել և հաղթահարել բնապահպանական մարտահրավերները ՎԶԵԲ-ի գործունեության երկրների ընտրված խոշոր քաղաքներում:

Հիմնական նպատակն է. հասնել շրջակա միջավայրի զգալի բարելավմանը և համապատասխան քաղաքներում խթանել դեպի կանաչ քաղաք որակյալ անցումը: Ի լրումն բնապահպանական նպատակներին, «Կանաչ քաղաքների շրջանակ 2»-ը նաև խթանում է կայուն քաղաքները՝ ներառական, տոկուն, լավ կառավարվող և խելացի քաղաքաշինության միջոցով: Կախված այն բանից, թե որ ասպեկտը կարող է առաջացնել առավել ուժեղ և կարևոր անցումային ազդեցություն՝ լավ կառավարումը, ներառականությունը, տոկունությունը թե մրցակցությունը, կընտրվի դրանցից մեկը, և այս շրջանակի յուրաքանչյուր Ենթածրագրի համար կներկայացվի որպես երկրորդային անցումային ասպեկտ: Այս անցումային նպատակներին աջակցում է հատուկ այս քաղաքների համար «Կանաչ քաղաքի գործողությունների պլանի» (GCAP) մշակումն ու իրականացումը: Պլանի նպատակն է. բացահայտել բնապահպանական մարտահրավերները, նպաստել շահագրգիռ կողմերի ավելի լավ համակարգմանը և հետաքրքրվածությանը, ինչպես նաև օգնել որոշել առաջնահերթությունները և մշակել շրջակա միջավայրի խնդիրների լուծման լավագույն ուղիները՝ նպատակային ներդրումների, ծառայությունների և քաղաքականության միջոցով:

Ծրագիրը հիմնականում կնպաստի Դեպի կանաչ տնտեսություն անցման որակի բարձրացմանը ջերմոցային գազերի արտանետումների կրճատման միջոցով՝

նվազեցնելով տեխնիկական և առևտրային կորուստները, ինչպես նաև պահանջելով կառավարման լրացուցիչ օգուտներ և օժանդակություն՝ երկարաժամկետ կտրվացքով վերացնելու Հայաստանի էներգահամակարգում վերականգնվող էներգիայի սահուն ինտեգրման խոչընդոտները: Ծրագիրը նաև կաջակցի Մրցակցային նպատակներին՝ համակարգի արդիականացման և նոր ավտոմատ կառավարման և խելացի հաշվառման համակարգերի կիրառման միջոցով, ինչը կօգնի բարձրացնել էներգահամակարգի հուսալիությունն ու ճկունությունը՝ մատակարարման ընդհատման միջին ժամանակի զգալի կրճատմամբ, քանի որ այդ ընհատումները թե՛ խաթարիչ են, և թե՛ ծախսատար Գյումրիում և Երևանում բիզնեսների և այլ վերջնական օգտագործողների համար: Բացի այդ, Բանկի կողմից ֆինանսավորումը կնպաստի դեպի թվայնացում անցմանը՝ Հայաստանում «խելացի» հաշվիչների զանգվածային ներդրման միջոցով, որոնք թվային տնտեսության «խելացի» ցանցի կարևոր վերջնակետերն են, իսկ թվային տնտեսությունը ՎԶԵԲ-ի Ռազմավարական կապիտալի շրջանակի հիմնասյուներից մեկն է:

## Հաճախորդը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ

«ՀԷՑ»-ը Հայաստանի օրենսդրությամբ սահմանված փակ բաժնետիրական ընկերություն է, որը մասնակցում է երկրում էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման գործընթացներին: «ՀԷՑ»-ը ամբողջությամբ պատկանում է «Տաշիր գրուպ» -ին, որն ավելի քան 200 արդյունաբերական և շինարարական ընկերությունների բազմազան խումբ է և ամբողջությամբ վերահսկվում է հայազգի ձեռնարկատեր Սամվել Կարապետյանի և նրա ընտանիքի կողմից:

## ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

60,000,000.00 ԱՄՆ դոլար

## Ծրագրի ընդհանուր գումարը

148,400,000.00 ԱՄՆ դոլար, այդ թվում մինչև 20,000,000 ԱՄՆ դոլար սինդիկացված

## Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է «B» կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն՝ ESP 2019): Այս ծրագրի համար Բնապահպանական և սոցիալական ստուգումն իրականացվել է անկախ խորհրդատուի կողմից՝ փաստաթղթերի հեռակա ստուգման եղանակով, COVID-19 մոտեցմանը համապատասխան, «ՀԷՑ»-ի ղեկավարության հետ հարցազրույցների, ինչպես նաև տեսազանգերի միջոցով ընտրված նախագծային վայրերի այցելությամբ: Բանկը ծանոթ է Ընկերության գործառնություններին և բնապահպանական, առողջապահական և անվտանգային կարողություններին, քանի որ ունի երկարամյա հարաբերություններ Ընկերության հետ (նախորդ գործարքները եղել են 2009 և 2017

թվականներին): 2018 թ.-ից ի վեր՝ I փուլի ներդրումից հետո, Ընկերությունն իրականացնում է Բնապահպանական և սոցիալական գործողությունների կորպորատիվ կենսունակ պլան, որի իրականացման ընթացքը վերահսկվում է Վարկատուների տեխնիկական և ԲՍ անկախ խորհրդատուների կողմից՝ կիսամյակային տեղայցերի միջոցով (վերջին զեկույցը թվագրված է 2020 թ.-ի հոկտեմբերով):

Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանի իրականացման արդյունքում Ընկերությունը հզորացրել է իր՝ Կառավարման ինտեգրված համակարգը (IMS) և ներկայումս ունի ISO 9001, ISO14001, ISO45001 և ISO50001 սերտիֆիկատներ (ISO 9001, 14001 և 45001-ը ամբողջ ընկերության հավատարմագրերն են, իսկ ISO 50001-ը ընդգրկում է միայն «ՀԷՑ»-ի էլեկտրահաղորդման գծերը): Այնուամենայնիվ, դեռ կան ոլորտներ, որոնք հետագա բարելավման կարիք ունեն: I փուլի ներդրումների և կորպորատիվ ԲՍ կատարողականի մոնիտորինգի ընթացքում նշվել է, որ «ՀԷՑ»-ի Առողջապահական և անվտանգային կատարողականը բավարար չէ՝ Ընկերության աշխատակիցների, կապալառուների և հասարակության շրջանում պատմության ընթացքում գրանցված մահվան դեպքերի մասին զեկուցելու հետաձգման առումով: Սա մտահոգության տեղիք է տալիս, և Բանկը ակտիվորեն աշխատում է «ՀԷՑ»-ի հետ մահացու միջադեպերի հիմնական պատճառների վերլուծության, էլեկտրական էներգիայի մեկուսացման առկա ընթացակարգերի վերանայման և հասարակության իրազեկման առավել համապարփակ քարոզչության վրա: Սա ներառում է Բանկի կողմից ֆինանսավորվող՝ IOSH կառավարման անվտանգության դասընթացների տրամադրումը «ՀԷՑ»-ի առողջապահության, անվտանգության և տեխնիկական գծով տնօրենների համար, ինչպես նաև Ընկերության ավագ ղեկավարության համար առողջապահության և անվտանգության մշակույթի դասընթացների պլանավորված անցկացում՝ նրանց շահագրգռվածությունն երաշխավորելու համար:

Ընկերությունը անդրադարձել է վտանգավոր թափոնների կառավարման հետ կապված կարևոր բնապահպանական ռիսկերին՝ հատուկ վտանգավոր թափոնների պահեստ կառուցելու միջոցով (գործում է 2021թ.-ի սկզբից), ինչպես նաև ձևակերպելով թափոնների համապատասխան անձնագրեր ու թափոնների մշակման ընթացակարգեր, արդիականացնելով և փոխարինելով յուղի պահեստարանները Ներդրումների կատարման համաշխարհային ստանդարտների (GIP) համապատասխան, կիրառելով Բնապահպանական և սոցիալական սքրինինգի գործընթացը Ներդրումային պլանի բոլոր ենթածրագրերի նկատմամբ և ներդրնելով կապալառուների կառավարման ընթացակարգերը: Մյուս կողմից, Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանի (OESAP) որոշ այլ գործողությունների, այդ թվում՝ տրանսֆորմատորային յուղերում պոլիքլորացված բիֆենիլների (PCB) առկայության թեստավորման, Բնապահպանական, առողջապահական և անվտանգային հետագա վերապատրաստման, թափոնների կառավարման պրակտիկայում հետագա բարելավումների հարցը դեռ լուծված չէ: Բանկը կշարունակի հետամուտ լինել Ընկերության հետ աշխատանքին՝ SF6 գազի կառավարման, ինչպես նաև էլեկտրահաղորդման գծերից թռչունների վրա ազդեցությունը սահմանափակելու ընթացակարգերի մշակման գործում:

Ընդհանուր առմամբ, չնայած COVID-19 համաճարակի և բազմաթիվ արտաքին մարտահրավերների, Ընկերությանը հաջողվել է առաջընթաց գրանցել ԲՍԳՊ-ի (ESAP)

առումով: Այնուամենայնիվ, սահմանված քաղաքականությունների և ընթացակարգերի իրականացումը երկրի մասշտաբով գործառնություններում պահանջում է շարունակական անձնական ջանքեր և ֆինանսական ռեսուրսներ: Ընկերությունն ունի ավելի քան 6800 աշխատակից (88% տղամարդիկ են, 12%՝ կանայք) և նախատեսում է մինչև 2028 թվականը կրճատել իր աշխատուժը մինչև 6150 մարդ (սա հիմնականում կապված է «ՀԷՑ»-ի ենթակառուցվածքի արդիականացման և գործառնությունների արդյունավետության բարելավման հետ): Ընկերությունն ունի հստակ մշակված՝ կրճատումների քաղաքականություն և արձակման առատաբաշխ նպաստ՝ «Տաշիր գրուպ»-ի (Հովանավորի) այլ ձեռնարկություններում վերապատրաստման և աշխատանքի տեղավորման հնարավորություններով: Արհմիությունների և Կոլեկտիվ աշխատանքային վեճերի մասին գործող պայմանագիրը վերանայվել է 2020 թվականին: Ընկերությունը ներդրել է բողոքարկման ներքին մեխանիզմ, և Բնապահպանական և սոցիալական ասպեկտների ստուգման (ESDD) միջոցով առաջարկվել են որոշ բարելավումներ, որոնք արտացոլված են ԲՍԳՊ-ում: Ընկերությունից պահանջվում է թարմացնել Մարդկային Ռեսուրսների կառավարման  ընթացակարգերը՝ Գենդերային բռնության և ոտնձգությունների (GBVH) կապակցությամբ պահանջներին համապատասխան:

Բնապահպանական և սոցիլական ասպեկտների ստուգումը (ESDD) հաստատել է, որ II փուլի բոլոր ներդրումները կատարվելու են ցածր լարման առկա ենթակառուցվածքներում, վերաբնակեցման կարիք չի լինելու, և ԲՍ ռիսկերը, հավանաբար, լինելու են ժամանակավոր և տեղանքին բնորոշ: Այնուամենայնիվ, Բնապահպանական և սոցիլական ասպեկտների ստուգման արդյունքում ընդգծեց, որ «ՀԷՑ»-ի գործառնությունների ազդեցությունը կենսաբազմազանության վրա պահանջում է հետագա բարելավումներ՝ սքրինինգի գործընթացի ուժեղացման միջոցով՝ հայտնաբերելու միջազգային պաշտպանության տակ գտնվող տարածքների և թռչունների տեսակների վրա հնարավոր ազդեցությունները և նախագծերում իրականացնելու համապատասխան մեղմման միջոցառումներ:

Մշակվել է և իրականացվելու է Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (SEP), որը կապված է համայնքների էլեկտրական անվտանգության արշավի հետ: Ծրագրի համար մշակվել է և հանրայնացվելու է ոչ տեխնիկական ամփոփագիր (NTS): Մշակվել է նաև վերանայված ԲՍԳՊ-ն, որը, նախքան Խորհրդի հաստատումը, կհամաձայնեցվի Ընկերության հետ: ԲՍԳՊ-ն կենտրոնանում է ԲԱԱ (EHS) կարողությունների (ներառյալ Խորհրդի մակարդակում) և գործընթացների հետագա ամրապնդման վրա, շրջակա միջավայրի և Առողջապահության ու անվտանգության (H&S) հետագա դասընթացների, գործառնական ընթացակարգերի՝ ներառյալ էլեկտրական մեկուսացման կատարելագործման, կապալառուների կառավարման և թափոնների կառավարման և կենսաբազմազանության վրա ազդեցության առավելագույն նվազեցման վրա: Ընկերությունը պետք է ուժեղացնի պոլիքլորացված բիֆենիլների (PCB) թեստավորման ռեժիմը՝ հաշվի առնելով ազգային լաբորատորիաների անբավարար կարողությունները և անցկացնի ԱԱ (H&S) անկախ աուդիտ: ՄՌ ընթացակարգերը և բողոքարկման մեխանիզմը պետք է թարմացվեն՝ Գործունեության նկատմամբ պահանջ 2 (PR2)-ը լիովին բավարարելու համար: Բանկը և նրա համավարկատուն կշարունակեն աջակցել Ընկերությանը՝ բարելավելով ԱԱ կարողությունները և Ներդրումների կատարման համաշխարհային ստանդարտների (GIP) հետ համապատասխանեցված գործելակերպը: Բանկը և նրա համավարկատուները

կշարունակեն վերահսկել ծրագիրը անկախ ԲՄ խորհրդատուի միջոցով:

## Տեխնիկական աջակցություն

Առկա չէ:

## Հավելյալություն

ՎՋԵԲ-ը առաջարկում է երկարաժամկետ ներդրումային կառուցվածք, որը հարմար է երկարաժամկետ ներդրումային ծրագրի համար, երբ այլընտրանքային առևտրային ֆինանսավորումը սահմանափակ է: Ծրագիրը նաև կբարձրացնի էլեկտրաէներգիայի մատակարարման որակը և 2 տարվա ընթացքում կկրճատի $CO_2$ տարեկան արտանետումները գրեթե 13,000 տոննայով` համակարգում էներգիայի կորուստների կրճատումով պայմանավորված: Բացի այդ, Ծրագիրը կօգնի հաճախորդին անցում կատարել դեպի միջազգային լավագույն գործելակերպը՝ համակարգի հուսալիության կամ ճկունության տեսանկյունից, համակարգի գործունեության զգալի բարելավմամբ:

## Ընկերության կոնտակտային տվյալները

Արմեն Արշակյան
arshakyan_AS@ena.am
+37477774000
+37477774000
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0047, Արմենակյան փողոց 127

# Անցումային շրջանի ընկալումը

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

# Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168
Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք ՎԶԵԲ-ի գնումներ:

Հեռ.՝ +44 20 7338 6794
Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

# Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

# Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

ԲՍՔ-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են ԲՍՔ-ում:

# Բարեվարքություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

# Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել Տեղեկությունների հասանելիության քաղաքականության կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

# Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ իր՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ

քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը ՝ իմանալու ավելին ԾՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես Դիմում ներկայացնել ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՀԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com ՝ ԾՀԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: